ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 դեկտեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

174
(2840

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ-ԱԿԱՆԸ ՆՄԱՆՎՈՒՄ Է «ՆԱԽԿԻՆՆԵՐԻՆ»

Թավշյահեղափոխականների թիմում նոր «շմայսներ» եւ «միերսեդրակյաններ» են կերտվում: Այս անգամ խոսքը ԱԺ-ում ոչնչով աչքի չընկնող, հազվադեպ ելույթներ ունեցող Արեն Մկրտչյանի մասին է: Նա երեկ Ալավերդու համայնքապետարանում որոշել էր «կինոյի տղա» խաղալ ու իսկական շոու էր բեմադրել: Ինչպես հայտնի է, երեկ տեղի ունեցավ Ալավերդի համայնքի ավագանու նիստ, որ ժամանակ իրենց «ժողովրդավարության բաստիոն» հռչակած ՔՊ-ականները անվստահություն հայտնեցին Ալավերդու ընդդիմադիր համայնքապետ Արկադի Թամազյանին, որը ներկայացնում էր «Ապրելու երկիր» կուսակցությունը, այն կուսակցությունը, որի հովանավորը Ռուբեն Վարդանյանն է, եւ որի ազատության համար փաստացի ոչինչ չի անում Նիկոլ Փաշինյանի թիմը: Եվ, ահա, ՔՊ-ական պատգամավոր Արեն Մկրտչյանը, որը վերջին անգամ անհիշելի ժամանակներից է ԱԺ-ում ելույթ ունեցել կամ որեւէ նախագիծ հեղինակել, որոշել էր Ալավերդու համայնքապետարանում շոու բեմադրել եւ գոնե այնտեղ աչքի ընկնել: Նա անընդհատ կռիվ էր հրահրում, անվայելուչ պահվածք էր դրսեւորում եւ վիրավորական արտահայտություններ հնչեցնում Ալավերդու արդեն նախկին համայնքապետ Արկադի Թամազյանի հասցեին: Ուշագրավ է, որ 2022թ.-ի՝ Ալավերդի համայնքի ՏԻՄ ընտրություններում Արեն Մկրտչյանը գլխավորում էր ՔՊ կուսակցության համամասնական ցուցակը, սակայն ՔՊ-ն Ալավերդիում պարտվել էր «Ապրելու երկիր» կուսակցությանը: Այս պարտության համար ՔՊ-ականները մինչեւ հիմա մեղավոր համարում են Արեն Մկրտչյանին: Հիմա, փաստորեն, ընտրությունները տապալած Արեն Մկրտչյանը որոշել է կռիվների եւ անվայելուչ շոուների միջոցով Նիկոլ Փաշինյանի աչքին բարձրանալ ու թիմակիցների մոտ նորից իր հանդեպ վստահություն ձեւավորել՝ դառնալով մերօրյա Շմայս:



Վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն՝ 2022 թվականին Հայաստանում շինարարության ծավալները, 2021 թվականի համեմատ, ավելացել են գրեթե 7 մլրդ դրամով: Վերջին տարիներին թե՛ Երեւանում, թե՛ մարզերում տեղ ու դադար չկա, ամենուր շինարարական հրապարակներ են եւ վեր խոյացած կռունկներ: Վերջին տարիներին Հայաստանում կա նաեւ կենտրոնացվածության խնդիր, այսինքն՝ ըստ 2022 թվականի տվյալների՝ Երեւան քաղաքում կենտրոնացված է ՀՀ 2 մլն 961 հազար բնակչության 1 մլն 92 հազարը: Վերջին անգամ ՀՀ բնակչության թիվը 3 միլիոն է հասել 2015 թվականին, բայց նույնիսկ այդ ժամանակ չկար բնակարանային ֆոնդի նման քանակի կառուցում: Այսօր Հայաստանը հենց այդ պատճառով կանգնած է փոշուց օդի աղտոտման լուրջ խնդրի առաջ. այս մասին փաստում են մասնագետները: Հաջորդ խնդիրը, որը, ըստ անշարժ գույքի ոլորտի մասնագետների, կանխատեսվում է հաջորդ տարի, այն է, որ 2024 թվականից անշարժ գույքի ոլորտում կոլապս է սկսվելու, քանի որ բնակարանաշինության պահանջարկը եւ սպառումը քչանալու է: Հայաստան վերջին շրջանում եկած ռուսների մեծ մասը, որոնց աշխատանքով էլ պայմանավորված է ՀՀ տնտեսական աճի մի մասը, արդեն լքել է Հայաստանը: Ըստ մեր աղբյուրների՝ կառուցապատողները հենց նրանց եւ Հայաստան եկած մշտական բնակություն հաստատած քաղաքացիների վրա հույս դնելով են կառուցել բարձրահարկ շենքեր, «դաուն թաուններ» եւ նոր թաղամասեր՝ ամեն ինչ հողին հավասարեցնելով, սակայն սպառումը քիչ-քիչ կրճատվում է: Այս խնդիրը փորձեցինք հասկանալ տնտեսագետ եւ փոքր ու միջին բիզնեսի իրավապաշտպան Սամսոն Գրիգորյանի հետ, որը մեզ հետ զրույցում ասաց, որ նման բան կանխատեսելի է, բայց բացարձակ այդպես չի կարող լինել. «Նման պահանջարկի դեպքում ոչ թե վաճառքի կանգ է սպասվում, այլ գների անկում: Առաջարկ կա, գինը ցածր է, պահանջարկ կա, բարձրանում է: Ասեմ ավելին՝ եկամտահարկի վերադարձի օրենքի չեղարկումից հետո, հնարավոր է, վաճառքը քչանա»: Դեկտեմբերի 7-ին կլրանա Սպիտակի երկրաշարժի 35-րդ տարելիցը. Երեւանում կառուցապատման բում է, իսկ երկրաշարժից տուժած ընտանիքներից դեռ ոչ բոլորն են բնակարանով ապահովված:



Երեկ խորհրդարանում ԱԺ ՔՊ խմբակցությունը դեմ քվեարկեց «ՀայաՔվեի» նախագիծը խորհրդարանում քննարկելու հարցին: 56 հոգի դեմ էր նախագծին, 24 հոգի՝ կողմ, մեկ հոգի ձեռնպահ է քվեարկել: ArmLur.am-ը պարզել էր, որ ձեռնպահ է քվեարկել ՔՊ խմբակցության պատգամավոր Գագիկ Մելքոնյանը: Դա, սակայն, օրվա միակ անակնկալը չէր: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ խմբակցությունում կողմ քվեարկող է եղել: Խոսքը Գուրգեն Արսենյանի մասին է: Նա կողմ է քվեարկել «ՀայաՔվե»-ի նախագծին: Եվս մեկ ՔՊ-ական պատգամավոր՝ Հռիփսիմե Հունանյանը, չի մասնակցել նախագծի քվեարկությանը, թեեւ դահլիճում դիմակով նստած էր:



Սեպտեմբերի 19-ից հետո Արցախից բռնի տեղահանվածներին ամիսներ շարունակ օգնություն տրամադրող դերասանուհի Անահիտ Սարդարյանը օրերս դիմել էր Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն՝ Արցախից բռնի տեղահանված երեխաների համար միջոցառում կազմակերպելու համար տարածք տրամադրելու պահանջով: ԿԳՄՍ փոխնախարարը իր պատասխանում նշել էր, որ արժեւորում եւ կարեւորում է նման միջոցառումները, նաեւ նրանց մասնակցությունը նախարարության ենթակայությամբ գործող թատերահամերգային ներկայացումներին: Նամակում առկա են բազմաթիվ ուղղագրական սխալներ, եւ այն ուղարկել է ԿԳՄՍ նախարարությունը: Instagram-ում «սթորիներ» անելուց հետո Անահիտին չեն համաձայնել նույնիսկ վարձով տարածք տալ: Անահիտ Սարդարյանի ինստագրամյան «սթորիներից» հետո Դանիել Դանիելյանը ընդունել եւ ամբողջ սխալը իր վրա է վերցրել: Անահիտ Սարդարյանի ինստագրամյան սթորիներից հետո, երբ բողոքի ալիք բարձրացավ, նրան ոչ թե անվճար, այլ վարձակալության սկզբունքով տրամադրել են «Արամ Խաչատրյան» համերգասրահը: Սրահի վարձակալության համար պահանջել են 1 մլն 300 հազարից մինչեւ 1 մլն 500 հազար դրամ. թե, ըստ պայմանագրի, որքան գումար էր, Անահիտը դժվարացավ ասել: «Կարող էին էդ գումարը չվերցնել, եւ մենք 1 միլիոն դրամի ավել բոթաս կունենայինք»,- ասաց Անահիտ Սարդարյանը: Կարճ ասած, հանրային ճնշումներից հետո ԿԳՄՍ նախարարությունը բավարարել է դերասանուհու պահանջը, եւ համերգը կկայանա:

ԿԱՐԾԻՔ

ԱԲՈՎՅԱՆԸ՝ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ»-Ի ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանի կառավարության հրաղարակած «Խաղաղության խաչմերուկ» նախագծի վերաբերյալ զրուցել է ԱԺ նախկին պատգամավոր, ԲՀԿ խորհրդի անդամ Արման Աբովյանի հետ:



-Պարոն Աբովյան, ի վերջո, ի՞նչ է «Խաղաղության խաչմերուկ»-ը, ի՞նչ է այն մեզ տալու:

-Նախ՝դա խոնավ հեքիաթների շարքին է դասվում: Մի քանի տարի առաջ մերօրյա իշխանությունները «Հայկական խամերուկ»-ի անուն էին տալիս, հիմա փոխել են «Խաղաղության խաչմերուկ», որով, իբրեւ թե, Հայաստանը պետք է դառնա, կամ իրենք են շատ ուզում, որ դառնա առեւտրային խաչմերուկ: Իհարկե, ես էլ եմ դա ուզում, սակայն սա հերթական սուտն է: Ընդ որում՝ ես հասկանում եմ, թե իրենք շատ լավ էլ հասկանում են, որ սա դժվար իրականանալի կամ անիրականանալի գործընթաց է բազմաթիվ պատճառներով: Նվազագույնը գոնե այն պատճառով, որ այն, ինչը իրենք ներկայացրել են, ամենաքիչը մեր բոլոր հարեւանների եւ թշնամիների շահերից չի բխում: Սկսենք սրանից:

-Այսինքն՝ Ադրբեջանի, Թուրքիայի շահերից չի՞ բխում, իրենք էլ էին, ախր, ցանկանում, որ ճանապարհները բացվեն:

-Ոչ, իրենք երբեք նպատակ չեն ունեցել ճանապարհ բացելու, իրենք նպատակ են ունեցել միավորվել: Մնացածը լոկ դիվանագիտական ելեւէջներով համեմված ինչ-որ արտահայտություններն են:

Սա՝ մեկ: Երկրորդ՝ եթե իշխանությունները տեղյակ չեն, հարկ եմ համարում տեղյակ պահել, որ նույն տրամաբանության ներքո Ադրբեջանը Նախիջեւանի շրջանում լուրջ շինարարական աշխատանքներ է իրականացրել, այսինքն՝ Նախիջեւանն են ուզում դարձնել տարածաշրջանային առեւտրաշրջանային գոտի, իսկ հայկական տարածքները դիտարկվում են միայն որպես տարանցիկ տնտեսական ուղիներ: Դա անհեթեթություն է:

-Պարոն Աբովյան, ընդամենը օրեր առաջ սահմանին նոր զոհ ունեցանք ցավոք, եւ մենք տեսնում ենք որ իշխանությունները շարունակում են իրենց թեզը առաջ տանել խաղաղության, երեկ էլ հանդիպում-քննարկում է տեղի ունեցել այդ թեմայով: Թշնամին կրակում է, սահմանին զոհեր ունենք, եւ զուգահեռ իրականության մեջ իրենք ինչ-որ խաղաղության ծրագրեր են մշակում: Ինչպե՞ս հասկանանք այս հակասությունը:

-Դա, կարծում եմ, ծայրահեղ քաղաքական տգիտության նշան է կամ միտումնավոր ինչ-որ գործընթաց: Ասեմ ավելին՝ նույն հաջողությամբ երեկվա դեսպանների հետ քննարկմանը կարող էին քննարկել Մարս մոլորակի հայաբնակեցման թեման, որը ավելի իրատեսական է այս պարագայում:

Ինչ վերաբերում է նպատակին. իրենք, իբրեւ թե, ուզում են կառուցողական երեւան այս պարագայում խաղաղության իրենց հռչակած դարաշրջանում: Իրենց հռչակած խաղաղության հետեւանքն այն է, որ մենք մշտապես ունենում են զոհեր, մենք կորցրել ենք Հայաստանի Հանրապետության տարածքից:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ո՞Վ Է ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ⇨



Ադրբեջանում տեղի իրավապաշտպանները կարող են ոտքի կանգնել՝ ի պաշտպանություն կալանավորված հայերի իրավունքների, բայց դա այնքան էլ հեշտ չէ:

Ադրբեջանցի իրավապաշտպանները, որոնք սովորաբար պատրաստ են պաշտպանել համաքաղաքացիների իրավունքները, կարծես փորձում են չմիջամտել հայերի դատավարություններին:

Իրավապաշտպան Էլդար Զեյնալովն ասում է, որ այս բանտարկյալների նկատմամբ ինքը «չեզոք-հեռու» վերաբերմունք ունի:

Իրավապաշտպանի կողմից տեղեկատվություն ստանալն իմաստ ունի միայն այն դեպքում, երբ այն կարող է օգտագործվել քննադատության, պաշտպանական արշավի համար, բայց այս հայերի հատուկ կարգավիճակը դա անհնարին է դարձնում»:

BBC–Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ BBC-ն անդրադարձել է Ադրբեջանի գործողություններին:

«Ադրբեջանական բանտում տասնյակ հայեր կան, որոնք ձերբակալվել կամ գերեվարվել են 2020 թվականի ղարաբաղյան պատերազմից հետո: Ինչո՞ւ ադրբեջանցի իրավապաշտպանները չեն պաշտպանում հայերին, ինչի՞ց է կախված նրանց վերադարձը: Այս եւ այլ հարցերի մենք փորձել ենք պատասխանել այս տեքստում»,- գրում է BBC-ն:

«Թե կոնկրետ քանի հայ կա ադրբեջանական բանտերում, հայտնի չէ: Նրանց թվում կան զինվորականներ (ադրբեջանական լրատվամիջոցներում նրանց հաճախ ահաբեկիչներ են անվանում), քաղաքացիական անձինք, ինչպես նաեւ չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարության անդամներ:

Ենթադրվում է, որ իրավիճակն ամենաբարդն է ռազմագերիների համար: Հայ իրավապաշտպաններն ասում են, որ զինվորներից շատերը զոհվել են գերության մեջ: Բացի այդ, Հայաստանը չի հավատում, որ Ադրբեջանում կա ընդամենը 33 հայ զինվորական: Հայկական տվյալներով՝ 2023 թվականի գարնան դրությամբ դրանք 100-ից ավելի են: Փաստաբան Սիրանուշ Սահակյանը, որն աշխատում է բանտարկյալների իրավունքների պաշտպանության ուղղությամբ, ասում է, որ պաշտոնական Բաքուն այսօր ճանաչել է Ադրբեջանում պահվող 55 անձի, որոնց թվում կան ինչպես զինվորականներ, այնպես էլ քաղաքացիական անձինք, ինչպես նաեւ չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարության անդամներ:

Նրա խոսքով՝ կա «Ադրբեջանի կողմից պաշտոնապես չճանաչված եւս 80 գերի, որոնք դարձել են բռնի անհետացման զոհ», եւ ոչ ոք չի հետեւում նրանց ճակատագրին: BBC-ի այն հարցին, թե քանի հայ է պահվում Ադրբեջանում, ո՛չ երկրի գլխավոր դատախազությունը, ո՛չ էլ արտաքին գործերի նախարարությունը չեն արձագանքել: Հայաստանի ԱԳՆ-ն եւ օմբուդսմենը նույնպես չեն արձագանքել մեր խնդրանքներին: Կարմիր խաչի միջազգային կոմիտեն իր պատասխանում հրաժարվել է նշել թվերը:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԱԿԱՀԵՐԹԻ ՏԱԿ

Երեկ կառավարության ներկայացուցիչների, դեսպանների եւ փորձագետների մասնակցությամբ Երեւանում տեղի ունեցավ «Տարածաշրջանային նոր իրողությունները եւ «Խաղաղության խաչմերուկը»» խորագրով փորձագիտական համաժողով: Քննարկման մասնակիցներին ներկայացվեց Հայաստանի կառավարության հեղինակած «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, որը վերաբերում է նոր ենթակառուցվածքների ստեղծմանը եւ ճանապարհների ապաշրջափակմանը: Համաժողովին մասնակցում էին ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, փոխարտգործնախարար Մնացական Սաֆարյանը, Հայաստանում Հնդկաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Նիլակշի Սահա Սինհան, ՀՀ-ում Իրանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մեհդի Սոբհանին, ինչպես նաեւ հայկական, իրանական, հնդկական, վրացական եւ թուրքական վերլուծական կենտրոնների փորձագետներ: Արայիկ Հարությունյանը, խոսելով «Խաղաղության խաչմերուկը»-ի մասին, նշում է՝ Հայաստանը, ելնելով իր աշխարհագրական դիրքից, այսօր էլ պատրաստ է ծառայել որպես կապող հաբ նման համագործակցության համար: Նրա խոսքով՝ «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը Հայաստանի ղեկավարությունը հռչակել է որպես խաղաղության օրակարգի կարեւոր մաս: ՀՀ փոխարտգործնախարար Մնացական Սաֆարյանն էլ վստահություն հայտնեց, որ Հայաստանը կարող է դառնալ «Հյուսիս-հարավ» միջազգային միջանցքի լիիրավ մասնակից: «Խաղաղության խաչմերուկ» նախագծի վերաբերյալ իրենց տեսակետներն են հայտնել նաեւ Իրանում եւ Հնդկաստանում Հայաստանի դեսպանները: Թե որքանով է իրականանալի Հայաստանի կառավարության հռչակած «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, ժամանակը ցույց կտա, բայց կարող ենք արձանագրել, որ մինչ օրս Հայաստանի խաղաղության նկրտումները միակողմանի են, իսկ թշնամին, ընդհակառակը, շարունակում է իր ագրեսիվ քաղաքականությունը, ինչի հետեւանքով ընդամենը երեկ նոր զոհ ունեցանք:

ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը փոխել է իր որոշումը:

Բանն այն է, որ երեկ խորհրդարանում ընթացավ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորի ընտրության հարցը: Թեկնածուները երեքն էին՝ Սերգեյ Մարաբյանը, Ռուբիկ Մխիթարյանը եւ Մանվել Շահվերդյանը:

Մինչ այս ՔՊ-ականները որոշում են ունեցել ընտրել Ռուբիկ Մխիթարյանին, սակայն «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ խմբակցության ներսում թեժ քննարկում է եղել, որից հետո որոշում է փոխվել: Ըստ այդմ՝ ՔՊ-ականները որոշել են դատավոր ընտրել Սերգեյ Մարաբյանին: Նկատենք, որ երեկ՝ հարցի քննարկման ժամանակ, ներկայացրել էր միայն ինքը:

Իրավիճակի հետ կապված «Ժողովուրդ» օրաթերթին այլ մանրամասներ եւս հայտնի են դարձել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԴԵՍՊԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

«Աշխարհում չկա խնդիրների լուծման որեւէ այլ տարբերակ, քան խաղաղության գնալը, ուստի մենք բոլորս պետք է ջանք գործադրենք միմյանց հետ խոսելու համար»,- «Նոր իրողություններ եւ խաղաղության խաչմերուկ» փորձագիտական համաժողովից հետո լրագրողների հետ զրույցում հայտարարեց ՀՀ-ում Հնդկաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Նիլակշի Սահա Սինհան:

Խոսելով ՀՀ կառավարության հեղինակած «Նոր իրողություններ եւ խաղաղության խաչմերուկ»-ի մասին՝ դեսպանը նշում է՝ տարածաշրջանային փոխկապակցվածությունը եւ երկու երկրների միջեւ կապեր հաստատելը, ինչպես այս ծրագիրն է ենթադրում, նպաստում է նաեւ ազգերի մերձեցման. «Հեռավորությունը ստիպում է ազգերին, որպեսզի տարբեր կարծիքներ ունենան իրար մասին, բայց երբ նրանք առերեսվում են, ապա այդ բացասական հեռավորությունը կարող է վերանալ:

Այս առումով նախագիծը բավականին հեռանկարային է: Մենք հույս ունենք, որ սա տարածաշրջանին խաղաղություն կբերի»,-հավելեց դեսպան Նիլակշի Սահա Սինհանը:

Ադրբեջանը սեպտեմբերին էթնիկ զտում իրականացրեց Արցախում, ինչի հետեւանքով 120.000 հայեր ստիպված եղան լքել իրենց հայրենիքը: Արցախում իրականացված էթնիկ զտման մասին կան հստակ փաստեր:

«Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքվեց դեսպանից՝ ինչու միջազգային հանրությունը հստակ գնահատական չի հնչեցնում այս մասին, ինչ դիրքորոշում ունի քաղաքակիրթ հանրությունն այս մասով. «Դուք գիտեք, որ Հնդկաստանը մշտապես աջակցել է, որպեսզի երկրները նստեն սեղանի շուրջ եւ լուծեն իրենց բոլոր հարցերը բացառապես բանակցությունների միջոցով:

Հիմա «Խաղաղության խաչմերուկ»-ի միջոցով Հայաստանը ձեռք է մեկնում խաղաղության համար: Պետք է միջոցներ գտնենք տարածաշրջանում երկարատեւ խաղաղություն հաստատելու համար»,- ասաց դեսպան Նիլակշի Սահա Սինհանը:

Համաժողովին մասնակցում էին ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, փոխարտգործնախարար Մնացական Սաֆարյանը, Հայաստանում Հնդկաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Նիլակշի Սահա Սինհան, ՀՀ-ում Իրանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մեհդի Սոբհանին, ինչպես նաեւ հայկական, իրանական, հնդկական, վրացական եւ թուրքական վերլուծական կենտրոնների փորձագետներ:

Արայիկ Հարությունյանը, խոսելով «Խաղաղության խաչմերուկը»-ի մասին, նշում է՝ Հայաստանը, ելնելով իր աշխարհագրական դիրքից, այսօր էլ պատրաստ է ծառայել որպես կապող հաբ նման համագործակցության համար: Նրա խոսքով՝ «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը Հայաստանի ղեկավարությունը հռչակել է որպես խաղաղության օրակարգի կարեւոր մաս:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՅՏՆԵՑ

ՀԱՐՑԸ ԿԱ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ՈՉ

«Ադրբեջանի հետ խաղաղության գործընթացում պետք է կարգավորվի անկլավ/էքսկլավների հարցը, հարցի լուծման տարբերակները մի քանիսն են, սակայն առարկայական պայմանավորվածություն դեռ չկա»,- ասել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ ուղիղ եթերում պատասխանելով քաղաքացու հարցին, թե արդյոք Ադրբեջանի հետ բանակցություններում անկլավների հարց կա: Քաղաքացին նշել է, որ իրենք, ապրելով Տավուշի մարզում, չեն ցանկանում անորոշության մեջ ապրել եւ ուզում են, որ այդ հարցում հստակություն մտցվի:

«Նման հարց, այո՛, կա: Սակայն ի՞նչ է նշանակում այդ հարցը, որտեղի՞ց կա եւ ինչո՞ւ. Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության սկզբունքներից մեկն է, որ Հայաստանը եւ Ադրբեջանը փոխադարձաբար ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը՝ Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Ադրբեջանի տարածքների հիման վրա: Երբ ասում ենք Հայաստանի 29 հազար 800 քառ. կմ տարածք, դրա մեջ չեն մտնում այն էքսկլավ/անկլավները, որոնք Խորհրդային Միության ժամանակ պատկանել են Ադրբեջանին, եւ Հայաստանի 29 հազար 800 քառ. կմ-ի մեջ մտնում է Արծվաշենը, որը էքսկլավ է՝ շրջափակված Խորհրդային Ադրբեջանի տարածքով: Այս հարցը պետք է որեւէ ձեւով հասցեագրվի»,-ասել է Փաշինյանը:

Նիկոլ Փաշինյանի պնդմամբ՝ Արծվաշենը Հայաստանի ինքնիշխան տարածք է, եւ ինքը չի կարող ուղղակի ասել, որ Հայաստանի ինքնիշխան տարածքի այս կտորի հետ գործ չունի:

Նրա խոսքով՝ տարբերակները մի քանիսն են: «Մենք վերահաստատում ենք մեր ինքնիշխանությունը Արծվաշենի նկատմամբ, Ադրբեջանը՝ դե յուրե գոյություն ունեցած անկլավների նկատմամբ: Բազմաթիվ հարցեր կան այստեղ: Նախ պետք է այդ էքսկլավի տարածքը սահմանագծել, որովհետեւ պետք է վերահաստատել, թե ինչքան է այդ էքսկլավի տարածքը: Երկրորդը՝ եթե մենք հենց այս ֆիզիկական պարամետրերով ենք այս հարցը լուծում, հարց կա՝ անմիջական սահման Արծվաշենի հետ մենք չունենք, ինչպե՞ս ենք մենք մեր սահմանից մինչեւ Արծվաշենի սահման գոյություն ունեցող տարածքն անցնելու եւ համապատասխանաբար Ադրբեջանն էլ իր հերթին այդ պարագայում»,-ասաց Փաշինյանը:

Ըստ նրա՝ հարցը կարող է լուծվել նաեւ ուրիշ տարբերակով՝ այն էքսկլավ/անկլավները, որոնք պարփակված են Հայաստանի տարածքով, սկսում են համարվել դե յուրե Հայաստանի տարածք, այն, որ պարփակված է Ադրբեջանի տարածքով, սկսում է համարվել Ադրբեջանի տարածք: Սա, սակայն, արդեն կոնկրետ պայմանագրի թեմա է, որը պետք է նաեւ Հայաստանի խորհրդարանի կողմից վավերացվի:

Բանակցություններում այդ թեմայով քննարկումներ, ըստ վարչապետի, եղել են: Այս թեմայով կոնկրետ առարկայական պայմանավորվածություն, փոխադարձ համաձայնություն չկա:

«Անկլավ-էքսկլավների հարց, այո՛, կա, այդ հարցի լուծման տարբերակները ես մոտավորապես ասացի»,- նշեց նա՝ հավելելով, որ հարցի լուծման տարբերակի շուրջ համաձայնություն հիմա չկա:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՉ Է ԱՐԵԼ

ԱՄՆ 60 սենատոր միացել են դեմոկրատ սենատորներ Ալեքս Պադիլլայի եւ Աննա Էշուի նամակին: Նրանք կոչ են արել Կոնգրեսի առաջնորդներին մեծացնել անվտանգության օգնությունը Հայաստանին եւ մարդասիրական օգնությունը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին:

«Քանի որ Կոնգրեսը դիտարկում է լրացուցիչ ֆինանսավորում մեր դաշնակիցների անվտանգությունը բարձրացնելու համար, մենք կցանկանայինք ընդգծել Հայաստանի Հանրապետության խոցելի ժողովրդավարությունը, որն ամերիկյան աջակցության կարիքն ունի:

Մենք վճռականորեն աջակցում ենք օրինագծին ամրապնդելու համար ԱՄՆ-ի եւ Հայաստանի գործընկերությունն անվտանգության ոլորտում եւ լուծելու այն հումանիտար լուրջ խնդիրները, որոնք առաջացել են Ադրբեջանի վերջին ագրեսիայի հետեւանքով»,- ասված է նամակում:

ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը չի մասնակցի 2023 թվականի դեկտեմբերի 19-ին Մոսկվայում կայանալիք Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի խորհրդի արտագնա նիստին եւ 16-րդ լիագումար նիստին: Այս մասին հայտնել է ՀՀ ԱԺ նախագահի մամուլի խոսնակ Ծովինար Խաչատրյանը:

«Նիստերին չի մասնակցի նաեւ ՀՀ ԱԺ պատվիրակությունը: Մոսկվա չմեկնելն այսօր ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը գրավոր հաստատել է ՌԴ ԴԺ Պետական դումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինին ուղղված պաշտոնական նամակով»,- նշված է հաղորդագրության մեջ:

ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ ՍՏՈՒՄ Է

Երեկ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը խորհրդարանում հայտարարեց, թե Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորի թեկնածու Ռուբիկ Մխիթարյանը վիրահատվել եւ այդ պատճառով ներկա չէ դատավորի ընտրության հարցով քննարկմանը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԲԴԽ նախագահը ստում է: Բանն այն է, որ» մեր տեղեկություններով, Մխիթարյանը վիրահատվել էր դեռ օգոստոսին, ավելին՝ նա այժմ Վերաքննիչ քրեական դատարանում աշխատանքի է:

Հավելենք, որ առաջադրված են Սերգեյ Մարաբյանի, Ռուբիկ Մխիթարյանի եւ Մանվել Շահվերդյանի թեկնածությունները: «Ժողովուրդ» օրաթերթը դեռ նոյեմբերի 11-ին գրել էր, որ, մեր տեղեկությունների համաձայն, ՔՊ-ին արդեն հասկացրել են, որ պետք է այնպես անեն, որ քվեարկեն Մխիթարյանի օգտին:

ՈՒՇԱԳՐԱՎ

ՃՆՈՒՆԴԸ, ԿՆՈՒՆՔՆ ՈՒ ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ ֆինչական կոմիտեի Արմավիրի մարզային ֆինչական վարչությունում ավարտվել է Արմավիրի մարզի երկու բնակիչների դանակահարության դեպքերի առթիվ նախաձեռնված երկու քրեական վարույթների նախաքննությունը: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին ՀՀ ՔԿ-ից:

«Դեպքերից մեկի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Արմավիրի մարզի 32-ամյա բնակիչը, 2023թ. օգոստոսի 7-ին քրոջ ամուսնու տանը մասնակցելով քրոջ ծննդյան տարեդարձի կապակցությամբ կազմակերպված արարողությանը, կենցաղային հարցերի շուրջ վիճաբանության մեջ է մտել վերջինիս ամուսնու հետ եւ հեռացել: Որոշ ժամանակ անց վերադառնալով՝ 32-ամյա տղամարդը նշված տան դիմաց շարունակել է վիճաբանությունը, որի ընթացքում սուր ծակող-կտրող առարկայով հարվածել է քրոջ ամուսնու որովայնին՝ վերջինիս առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Արմավիրի մարզի 32-ամյա բնակչին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը:

Մյուս դեպքի նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով հաստատվել է, որ 2023թ. ապրիլի 30-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում՝ Մեծամոր քաղաքի հանդիսությունների սրահներից մեկում տեղի ունեցող մկրտության արարողության ժամանակ, Արմավիրի մարզի 23 եւ 38-ամյա բնակիչները զրուցել են կենցաղային հարցերի շուրջ, որի ընթացքում երիտասարդը դիտողություն է արել 38-ամյա տղամարդուն, եւ նրանց խոսակցությունը վերաճել է վիճաբանության: Այնուհետեւ տեղափոխվելով նշված սրահից մոտ 100 մետր հեռավորությամբ գործող մարզասրահի մոտ՝ 23-ամյա երիտասարդը մի խումբ անձանց հետ եւ 38-ամյա տղամարդը իր 27-ամյա եղբոր եւ մի խումբ անձանց հետ կատարել են խուլիգանություն՝ հասարակության նկատմամբ ցուցաբերելով անհարգալից վերաբերմունք, խախտելով հարակից շենքերի բնակիչների անդորրը, խափանելով մկրտության արարողությունը եւ խոչընդոտելով հասարակական նշանակության օբյեկտի բնականոն աշխատանքը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կողմերի միջեւ տեղի ունեցած ծեծկռտուքի ընթացքում 27-ամյա երիտասարդը դանակի գործադրման սպառնալիքով կատարել է խուլիգանություն, այնուհետեւ դիտավորությամբ հարվածել է 23-ամյա երիտասարդի կրծքավանդակին՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնաս:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ եղբայրներից մեկին՝ Արմավիրի մարզի 38-ամյա բնակչին, մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, մյուսին՝ 27-ամյա երիտասարդին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով, իսկ 23-ամյա երիտասարդին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Երկու դեպքերով վերոնշյալ 4 մեղադրյալների մասով նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթների նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

Նշված երկրորդ դեպքով մի խումբ այլ անձանց կողմից խուլիգանություն կատարելու մասով նախաքննությունը շարունակվում է:

Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ խուլիգանությանը մասնակից անձանց շրջանակը, ինքնությունը պարզելու, նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու ուղղությամբ»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՀԵՏՔԵՐՈՎ

ՋԻՆՎՈՐԻ ՎԻՐԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՎ

2023 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունից հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 14:35-ի սահմաններում՝ ՀՀ ՊՆ N զորամասի մարտական դիրքում ինժեներական աշխատանքներ կատարելու ժամանակ, հակառակորդի դիպուկահարի կրակոցից միջանցիկ գնդակային վիրավորում է ստացել զինծառայող Գերասիմ Առաքելյանը:

ՔԿ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ նույն օրը բժշկական կենտրոն տեղափոխվելու ճանապարհին զինծառայողը ստացած հրազենային վնասվածքից մահացել է:

Նկատի ունենալով, որ առկա են Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողի կողմից ռասսայական, ազգային, էթնիկ ծագումով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով ՀՀ ԶՈՒ զինծառայողին ապօրինաբար կյանքից զրկելու առերեւույթ հատկանիշներ՝դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ութերորդ կայազորային քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 15-րդ կետերի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

Կատարվում է նախաքննություն: Ձեռնարկվում են անհետաձգելի ապացուցողական եւ վարութային գործողություններ դեպքի հանգամանքները պարզելու նպատակով:

ԴԱՏԵՐ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԸ

Դատախազը 2023 թվականի նոյեմբերի 29-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել ինանմյա դստերը ֆիզիկական ուժեղ ցավ եւ հոգեկան ուժգին տառապանք պատճառած Ա.Փ.-ի նկատմամբ:

Դատախազությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ, մասնավորապես, քրեական վարույթով պարզվել է, որ Ա.Փ.-ն ինանմյա դստեր մազերից քաշելով, ձեռքերով ու ոտքերով մարմնի տարբեր մասերին հարվածներ հասցնելով, միջնակարգ դպրոցից տեղափոխել է իրենց բնակարան, հանել է նրա հագուստը, հագին թողել միայն կիսավարտիքն ու շապիկը եւ տեղափոխել շենքի բակում գտնվող, իրեն պատկանող խորդանոց: Մոտ 2 ժամ 30 րոպե դստերը պահել է կողպված խորդանոցում ցրտի եւ մթության պայմաններում:

Քրեական վարույթով տվյալներ են ձեռք բերվել, որ Ա.Փ.-ի կողմից դստեր նկատմամբ նման գործողությունները կրել են պարբերական բնույթ:

Դատախազը 2023 թվականի նոյեմբերի 29-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել Ա.Փ.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 6-րդ կետերով (հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անչափահասին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը):

Ա.Փ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառված կալանքը: Ա.Փ.-ի ինանմյա դուստրը տեղափոխվել է երեխաների պաշտպանության կենտրոն:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԱՄՈՒՍԻՆՆԵՐԸ ՄԱՀԱՑԵԼ ԵՆ

Դեկտեմբերի 5-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 12:25-ի սահմաններում Երեւանի 1-03 շտապօգնության կենտրոնից ՀՀ ներքին գործերի նաձարարության ոստիկանության էրեբունու բաժին ահազանգ է ստացվել, որ շտապօգնության 4-րդ ենթակայանի բժիշկների թիվ 47 խումբը կանչով մեկնել է էրեբունի փողոցի շենքերից մեկի բնակարան, որտեղ խոհանոցում հայտանբերել են դիեր. հաղորդում է Shamshyan.com-ը:

Ոստիկաններն ու քննիչները նշված տանը հայտնաբերել են նշված տան բնակիչներ 58-ամյա Աննա Ա.-ի եւ 60-ամյա Գեւորգ Մ.-ի դիերը:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ դիերի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Դեպքի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Մահացածներն ամուսիններ էին, եւ, ըստ նախնական տեղեկությունների, նրանք մահացել են շմոլ գազից, իսկ ոստիկաններն ու քննիչները հայտնաբերել են գազի անվտանգության համար նախատեսված հատուկ սարքը՝ անջատված, ծխահեռացման խողովակներն էլ կիսամաշված վիճակում են եղել, ու եթե գազի անվտանգության հատուկ սարքը անջատված չլիներ, ապա ողբերգական այս դեպքը տեղի չէր ունենա:

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՄԱՀԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ է ընդունվել 15 տարեկան տղա, որը, ծնողի խոսքով, նոյեմբերի 18-ին վայր է ընկել հեծանիվից: Այս մասին հայտնում են «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ից ու մանրամասնում, որ դեպքի օրը նա աջ դաստակի եւ աջ ազդրի շրջանում ցավեր է ունեցել, սակայն, հաշվի առնելով ոչ աշխատանքային օրերը, նոյեմբերի 20-ին դիմել է էջմիածնի հիվանդանոց, ստացել առաջին բուժօգնություն՝ ամբուլատոր կարգով:

«Նոյեմբերի 22-ին տղայի մոտ վերոնշյալ հատվածների ցավերը խորացել են, որից ելնելով՝ դիմել է «Սուրբ Աստվածամայր» ԲԿ, որտեղ եւս ցուցաբերվել է համապատասխան բուժօգնություն:

Առաջարկվել է հետագա հետազոտման եւ անհրաժեշտության դեպքում բուժումը իրականացնելու նպատակով հոսպիտալացում, սակայն տղայի ընտանիքը հրաժարվել է, եւ գնացել են տուն: Նույն օրը՝ երեկոյան, երեխայի մոտ սկսվել է շնչառական անբավարարություն՝ հեւոց:

Նոյեմբերի 23-ին նա կրկին ընդունվել է «Սուրբ Աստվածամայր» ԲԿ, անմիջապես կատարվել է համակարգչային շերտագրում (KT) հետազոտություն, հայտնաբերվել երկկողմանի պոլիսեգմենտար թոքաբորբ եւ հեպատոմեգալիա: Հետագա հետազոտությունների արդյունքում ախտորոշվել է նաեւ սեպսիս:

Վիճակի շարունակական վատացման ֆոնին երեխան անցել է ապարատային շնչառության, սակայն նրա կյանքը փրկել չի հաջողվել: Երեխայի մահվան վերջնական ախտորոշումը կտրվի դատաբժշկական փորձաքննությունից հետո»,-հայտնում են ԲԿ-ից:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 4-ից 5-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 60 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՅԴՊԵՍ ԷԼ ՔԱՅԼԵՐ ՉԱՐՎԵՑԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը նոյեմբերի 22-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում էր ուղարկել՝հարցնելով, թե Տավուշի մարզի տարածքում Դեբեդ գետի ափապաշտպան աշխատանքներ պետական բյուջեի միջոցներով երբ են նախատեսված, 2024 թվականին այդ աշխատանքները նախատեսված են արդյոք: Մարզպետարանի պատասխանում նշված է. «Տավուշի մարզի Դեբետ գետի ափապաշտպան աշխատանքներ չի նախատեսված, քանի դեռ միջպետական հանձնաժողովի կողմից սահմանազատման աշխատանքները չեն ավարտվել»:

Հայաստանի անկախանալուց հետո հայ-վրացական սահմանի սահմանազատումը չի ավարտվել, ասկայն վրացիները քարերով ամրացնում են Դեբեդի ձախ ափը, իսկ Հայաստանի իշխանությունն անգործության է մատնված: Հայաստանի եւ Վրաստանի միջեւ միջպետական սահմանագծերից մեկը համարվում է Դեբեդ գետը:

Ձնհալքից եւ անձրեւներից վարարած Դեբեդը, հանդիպելով ամրացած վրացական ափին, մղվում է դեպի հայկական տարածք, քանդում, քշում-տանում տարածքներ:

2010թ. գարնանը Դեբեդը Դեբեդավան գյուղից քշել-տարել է 2,8 հեկտար տարածք, որից 7 հազար քառակուսի մետրը այդ գյուղի բնակիչ Ալեքսեյ Մելիքսեթյանի դեղձի այգին էր: 12 տարի առաջ հայ-վրացական հանդիպում է եղել, որի ժամանակ հայ գիտնականներից մեկը, ցույց տալով քարտեզը, ապացուցել է, որ Դեբեդի հունը փոխվելու հետեւանքով գետը մոտ 70 մետր խորացել է հայկական տարածքում, համապատասխան չափով Հայաստանի տարածքը փոքրացել է:

Դեբեդավան գյուղի վարչական ղեկավար Գեւորգ Սարգսյանի խոսքով՝ ամեն տարի գարնանը վարարած Դեբեդը ափամերձ հողերից, այգիներից կտորներ է պոկում-տանում: Ափի վտանգավոր հատվածում են գտնվում գյուղի 7 բնակիչներին պատկանող հողերը, այդ թվում՝ Գեւորգի հոր հողամասը, անցած տարիներին Դեբեդը նրա հոր հողամասից քշել-տարել է, այն կիսել է: Գյուղի վարչական ղեկավարն ասաց, որ բնակիչներն այդ խնդրի վերաբերյալ դիմել են Տավուշի մարզպետարան եւ Շրջակա միջավայրի նախարարություն: Խորհրդային ժամանակ Հայաստանի տարածքում՝ Դեբեդավանի ներքին մասում, հողից եւ քարերից պատնեշ կար, որը փակում էր վարարած գետի ընթացքը: Տարիների ընթացքում այն մաշվել, մի մասն է պահպանվել, Դեբեդի վարարումների, գետի հունը դեպի Հայաստան փոխվելու հետեւանքով պատնեշն ամբողջությամբ այժմ գտնվում է Վրաստանի տարածքում, վրացիները քարերով ամրացրել են այն:

2019թ. Հայաստանի ԱԱԾ սահմանապահ զորքերի հրամանատար Վաղինակ Սարգսյանն այցելեց հայ-վրացական սահմանի այդ հատված, ծանոթացավ Դեբեդի վարարումներից Հայաստանի տարածքի նվազելու խնդրին, որպեսզի հարցը ներկայացնի, քննարկվի կառավարությունում, գտնվեն լուծումներ, սակայն այդպես էլ քայլեր չարվեցին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՃԱՐՎԵԼ Է 104 ՀԱԶԱՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին տրամադրվող երեք տեսակի՝ 100,000 դրամների, 40+10 հազար դրամների եւ 50,000 դրամների աջակցության միջոցառումները շարունակվում են: Այս մասին դեկտեմբերի 5-ին՝ Հումանիտար կենտրոնում ասուլիսի ընթացքում, տեղեկացրեց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Աննա Ժամակոչյանը:

«Այս պահին ունենք 100 հազար դրամների միանվագ միջոցառման շրջանակներում վճարված 109,395 անձ: 40+10 հազար դրամների աջակցությունը, որը նախատեսված էր կացարանի եւ կոմունալ ծախսերի նպատակով, հոկտեմբեր ամսվա համար վճարվել է 104,026 անձի:

Սկսվել են նաեւ նոյեմբերի վճարումները. 20,649 հոգու վճարվել են արդեն նոյեմբերի համար, շուրջ 20 հազար հոգու էլ կվճարվի վաղվանից: Մնացած տվյալները մշակվում են, եւ աջակցությունն առաջիկա օրերին կտրամադրվի: Վաղը կսկսվի 37,117 շահառուի 50,000-ական դրամների աջակցության վճարումները»,- նշեց փոխնախարարը:

Հիշեցնենք, որ կառավարությունն ավելի վաղ՝ նոյեմբերի 23-ի նիստում որոշեց 2 մլրդ դրամ հատկացնել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց առաջնային սոցիալական ծախսերը հոգալու նպատակով: Խոսքը նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համար յուրաքանչյուր անձի 50-հազարական դրամների հատկացման մասին է:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը հստակեցրեց, որ այս աջակցությունը հատկացվելու է 40 հազար շահառուի:

«Միջոցառումից կարող են օգտվել 100-հազարական դրամների շահառուները: Միջոցառումից չեն կարող օգտվել նրանք, որոնց բանկային հաշիվներում հոկտեմբերի 2-ի դրությամբ եղել է 2 մլն դրամից ավելի գումար, նրանք, որոնք ՀՀ բնակչության պետական ռեգիստրում հաշվառում ունեցել են սեպտեմբերի 19-ից առաջ, նրանք, որոնք բացակայում են ՀՀ-ից կամ նոյեմբերի 15-ի դրությամբ բնակվում են հյուրանոցներում եւ հյուրատներում: Աջակցություն տրամադրվում է մեկանգամյա էլեկտրոնային դիմումի հիման վրա, իսկ վճարումներն իրականացվելու են բանկերի միջոցով բացառապես անկանխիկ եղանակով»,- ասաց նախարարը:

Նարեկ Մկրտչյանը, անդրադառնալով 40+10 հազար դրամ աջակցության ծրագրին, ասաց, որ հոկտեմբերի համար 99 820 անձի վճարվել է: Նա նշեց, որ հոկտեմբերին բոլորին են հատկացրել, վճարել են առանց դիմումի, իսկ նոյեմբերի համար պետք է լինեն դիմումներ, որպեսզի հստակցվեն հասցեները: «Արդեն սկսել ենք նոյեմբերի համար դիմումներ ստանալ, շուրջ 80 հազար դիմում արդեն ստացել ենք: Մեկ այլ նախագծով խնդրում ենք մեկ մլրդ դրամ, որ սկսենք նոյեմբերի վճարումները: Մինչեւ 20 հազար հոգու կվճարենք այս նախագիծն ընդունելուց հետո նոյեմբերի համար»,-ասաց նախարարը՝ հավելելով, որ արդեն իսկ 108 336 անձի վճարվել են 100-հազարական դրամները:

ՀԱՅԱՍՏԱՆ

1 ԿԳ ՈՉԻՆՉ՝ ՏԻԵԶԵՐՔՈՒՄ ⇨

Դեկտեմբերի 1-ին «Հայասաթ-1» արբանյակն ուղարկվել է տիեզերք SpaceX ընկերության Falcon-9 հրթիռով ԱՄՆ-ի Վանդենբերգ ավիաբազայից: Հրթիռը տիեզերք էր արձակվել Երեւանի ժամանակով 22:20-ին, մոտ մեկ ժամ հետո «Հայասաթ-1» արբանյակն հաջողությամբ անջատվել էր հրթիռից ու դուրս եկել ուղեծիր:

Ավելի ուշ որոշ տարակարծություններ առաջ քաշվեցին, որ այդ արբանյակը որեւէ օգտակար բան չի կարող տալ Հայաստանին, նույնիսկ՝մեզ այդքան անհրաժեշտ արբանյակից արված պատկերներ:

«Ժողովուրդ» օրաթերթը կապվեց կիբեռանվտանգության մասնագետ Սամվել Մարտիրոսյանի հետ, որը մեզ բացատրեց, որ «Հայասաթ-1»-ը օգուտ կարող է տալ արբանյակաշինության զարգացման փուլում:

Ստացվում է, որ այդ 1 կիլոգրամանոց արբանյակը այդպես էլ ինչ-որ կերպ մեր առօրյայում փոփոխություններ չի մտցնելու եւ էականորեն ոչ մի օգուտ չի տալու:

«Ինչ-որ ձայնային փոխանցումներ կարող են իրականացնել տելեկոմունիկացիոն արբանյակները. դրա դեպքում ցանց պետք է լինի, մի հատը բան չի տա: Իսկ

նկարահանում անում է մեր վարձակալած արբանյակը: Եթե սկզբից մեկ կիլոգրամ փորձնական բան չուղարկես, միանգամից ռազմական արբանյակ սարքել չես կարող: Սա փուլային, կրթական, ուսումնասիրման բարդ տիրույթ է: Եթե սա չլինի, մնացածը դժվար թե լինի: Ոնց որ ասում են, փոքր քայլ աշխարհի համար, բայց մեծ քայլ՝ մեզ համար»,- ասաց Սամվել Մարտիրոսյանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՎԻԶԱՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

«Մենք տեղյակ ենք ԵՄ-Հայաստան վիզաների ազատականացման հարցում իրավիճակին, ուսումնասիրում ենք իրավիճակը, քննարկել ենք նաեւ դեսպանատների հետ, որովհետեւ, ի վերջո, դեսպանատներն են պատասխանատու վիզա տրամադրելու համար»,- դեկտեմբերի 5-ին լրագրողների հետ զրույցում նշեց Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը:

«Վիզաների դյուրացման գործընթացը շատ լավ արդյունքներ է տալիս, արդեն բազմաթիվ հայեր այցելել են ԵՄ: Մենք պատրաստ ենք շարունակել քննարկումները վիզաների ազատականացման ուղղությամբ, բայց որոշ ժամանակ պետք է սպասենք, տեսնենք՝ այս պրոցեսներն ինչ արդյունքներ են տալիս, որ այդ երկխոսությունը շարունակենք: Ինչպես գիտեք, այս հարցում պետք է լինի ԵՄ անդամ բոլոր երկրների կոնսենսուսը»,-ասաց նա:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 9 ՃՏՊ. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԱՆԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ

ՄՊՀ-Ն ՏՈՒԳԱՆԵԼ Է «ԻԳԻԹ»-ԻՆ

«Իգիթ» ընկերության կողմից բուսական յուղի առկայությամբ ապրանքն իրացվել է որպես «Լոռի» տեսակի պանիր: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդագրություն է տարածել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը:

«Պանրի եւ պանրային արտադրանքի շրջանառության ոլորտում իրականացված վերահսկողության արդյունքներով՝ ՄՊՀ-ն հարուցել է վարույթ, որի շրջանակներում արձանագրվել է, որ՝

- «Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից բուսական յուղի առկայությամբ ապրանքն իրացվել է որպես «Լոռի» տեսակի պանիր,
- ապրանքն իրացվել է առանց պիտակի,
- ապրանքն իրացվել է դրա մակնշվածքում անվանման, «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվության եւ արտադրող ընկերության մասին տվյալների բացակայությամբ:

«Իգիթ» ՍՊԸ-ն առեւտրային ցանցերին ապրանքի իրացումը կազմակերպել է միջնորդավորված՝ անհատ ձեռնարկատեր Ավետիք Հակոբյանի միջոցով՝ արդյունքում թույլ տրված խախտումները վերագրելով այդ անհատ ձեռնարկատիրոջը»,- ասված է հաղորդագրության մեջ:

«Իգիթ» ընկերությունը տուգանվել է շուրջ 32 միլիոն դրամի չափով:

Բացի այդ, հանձնաժողովին ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու համար «Իգիթ» ՍՊԸ-ն տուգանվել է 2 միլիոն դրամի չափով, իսկ անհատ ձեռնարկատեր Ավետիք Հակոբյանը հասարակության մոլորեցման դրսեւորմամբ անբարեխիղճ մրցակցության, շփոթության առաջացման դրսեւորմամբ անբարեխիղճ մրցակցության եւ հանձնաժողովին ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու համար տուգանվել է ընդհանուր շուրջ 4 միլիոն դրամի չափով:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (1)

Կազմակերպիչ «Ֆլորես Աճուրդի տուն» ՍՊԸ -ի կողմից իրականացվող բոլոր այն անշարժ գույքերի աճուրդները, որոնց աճուրդային վաճառքի ավարտը սահմանվել էր մինչեւ 2023թ.-ի դեկտեմբերի 29-ը, երկարաձգվում են մինչեւ 2024թ.-ի հուլիսի 1-ը ներառյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (011) 52-61-85 կամ այցելել բորսա՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա 40, 82/31 հասցե, ժամը 9:30-17:00:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (2)

Կազմակերպիչ «Բի Էս Թի» ՍՊԸ-ի կողմից իրականացվող բոլոր այն անշարժ գույքերի

աճուրդները, որոնց աճուրդային վաճառքի ավարտը սահմանվել էր մինչեւ 2023թ.-ի

դեկտեմբերի 29-ը, երկարաձգվում են մինչեւ 2024թ.-ի հուլիսի 1-ը ներառյալ: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (011) 56-45-13 կամ այցելել բորսա՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա 40, 82/31 հասցե, ժամը 9:30-17:00:

ՆԵՐԿԱՅԱՑՐԻՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՊԵԿ-ը մանրամասնել է, թե ինչ պետք է իմանալ անշարժ գույքը վարձակալության հանձնելու դեպքում:

Ի՞նչ պետք է անել առաջին քայլով

Անշարժ գույքը վարձակալության հանձնելիս անհրաժեշտ է կնքել վարձակալության պայմանագիր, որը պետք է ստանա պետական գրանցում: Այն դեպքում, երբ չի ստացել պետական գրանցում, ապա անշարժ գույքը վարձակալությամբ տրամադրած ֆիզիկական անձը պետք է այցելի հարկ վճարողների սպասարկման ցանկացած բաժին եւ թղթային եղանակով ներկայացնի վարձակալության վերաբերյալ հայտարարություն:

Ե՞րբ պետք է ներկայացնել հայտարարությունը

Անշարժ գույքը վարձակալությամբ տրամադրած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը հայտարարությունը հարկային մարմին պետք է ներկայացնի վարձակալության տրամադրման օրվան հաջորդող 5-օրյա ժամկետում, իսկ եկամտի ստացման դադարեցման դեպքում՝ դադարեցման օրվան հաջորդող 5-օրյա ժամկետում:

Ինչպե՞ս լրացնել հայտարարությունը

Հայտարարությունը պետք է ներկայացնել հարկ վճարողների սպասարկման ցանկացած բաժին թղթային տարբերակով՝ պարտադիր լրացնելով հետեւյալ տվյալները՝

վարձատու ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը,

ՀՎՀՀ-ն (որը պետք է ստանալ նախապես),

անձնագրային տվյալները,

հանրային ծառայության համարանիշը (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համարը,

հայտարարության ներկայացման ամսաթիվը,

անշարժ գույքի վերաբերյալ տվյալները,

վարձակալության ժամկետները,

վարձակալությունից ստացվող եկամտի չափը:

Ինչպե՞ս ստանալ հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)

Հայտարարությունը ներկայացնելու եւ եկամտային հարկը վճարելու համար անհրաժեշտ է հարկային մարմնից ստանալ հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) եւ կնքել հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու պայմանագիր՝ այցելելով հարկ վճարողների սպասարկման ցանկացած բաժին կամ լիազորելով այլ անձի իր անունից հանդես գալու հարկային մարմնում, ինչպես նաեւ առցանց եղանակով՝ Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի file-online.taxservice.am միջոցով:

Որքա՞ն է եկամտային հարկի դրույքաչափը

Անշարժ գույքը ֆիզիկական անձին վարձակալությամբ տրամադրելու դեպքում վարձատու ֆիզիկական անձը պարտավոր է ստացվող վարձակալական վճարից վճարել եկամտային հարկ, որը հաշվարկվում է գույքի վարձակալությունից ստացված եկամտից 10% դրույքաչափով: Հարկային տարվա ընթացքում ստացված վարձակալական վճարների հանրագումարը 60 մլն դրամը գե-րազանցելու դեպքում գերազանցող մասի համար հաշվարկում է լրացուցիչ եկամտա-յին հարկ՝ 10% դրույքաչափով:

Ե՞րբ եւ ինչպե՞ս պետք է վճարել եկամտային հարկը

Վարձակալական վճարներից եկամտային հարկն անհրաժեշտ է հաշվարկել ինքնուրույն եւ բացառապես էլեկտրոնային եղանակով՝ file-online.taxservice.am համակարգի միջոցով, հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի եւ սոցիալական վճարի տարեկան հաշվարկ:

Եկամտային հարկը պետք է հաշվարկել եւ վճարել մինչեւ հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա մայիսի 1-ը ներառյալ:

Որքա՞ն է տուգանքի չափը

2023 թվականի հոկտեմբերի 25-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-340-Ն օրենքի համաձայն՝ 2023 թվականի դեկտեմբերի 1-ից անշարժ գույքի վարձակալության հետ կապված օրենսգրքով սահմանված պահանջները չպահպանելու դեպքում սահմանվել է տուգանք՝ անշարժ գույքի՝ օրենքով սահմանված կարգով գնահատված՝ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 500 հազար դրամը: Մեկ տարվա ընթացքում խախտումը կրկնելու դեպքում տուգանքը գանձվում է 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ միլիոն դրամը:

Ո՞ր դեպքերում չի կիրառվի տուգանք

Այն դեպքում, երբ անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում, այն դեպքում, երբ վարձակալության գործարքից ծագող իրավունքները չեն ստացել պետական գրանցում, սակայն անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի վերաբերյալ օրենսգրքով սահմանված ժամկետում հարկային մարմին է ներկայացվել հայտարարություն, կամ հարկ վճարողը անշարժ գույքի վարձակալությունից ստացվող եկամուտներից օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկել է եկամտային հարկը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Գ

ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Ալեքս Հոում» ՍՊԸ-ի՝ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Հանքավան գյուղի վարչական տարածքում խմելու-կենցաղային նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 1.45 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից - 18:00-ն դիմել Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2023 թվականի դեկտեմբերի 11-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «Երեւանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ում փողային նվագախմբի դիրիժորի (փողային եւ հարվածային գործիքների ամբիոնի դասախոսի) թափուր տեղի համար:

Դասախոսի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ փաստաթղթային եւ հարցազրույցի: Մասնակիցների գիտելիքների եւ կարողությունների ստուգումը՝ հարցազրույցը, իրականացվելու է քոլեջի կողմից կազմված հարցատոմսերով:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. դիմում (Ձեւ 1),
2. բարձրագույն մասնագիտական կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
3. անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն (Ձեւ 4),
6. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ,
7. այլ պետության քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. մեկ լուսանկար՝ 3x4 չափի:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունման ժամկետն է՝ 06.12.2023 թ. - 20.12.2023 թ.:

Փաստաթղթերն ընդունվում են բոլոր աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-ից 18:00-ն, Ազատության 18 հասցեում:

Հարցազրույցը կանցկացվի 21.12.2023 թ.՝ ժամը 10:00-ին, Ազատության 18 հասցեում:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 285320 հեռախոսահամարով:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՏՄԵՑ

ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ՊԱՅԹՅՈՒՆԻՑ ԶՈՀՎԱԾՆԵՐԸ

Պայթյունի հետեւանքով եղբայրներից մեկը Ստեփանակերտում է մահացել, մյուսը՝ Երեւանում: «Հունվարի 23-ին եղբայրս՝ Արսենը, կդառնար 20 տարեկան, եթե սեպտեմբերի 25-ի այդ չարաբաստիկ պայթյունի օրը ստիպված չլիներ մի քանի լիտր բենզինի համար հերթ կանգնել եւ պայթյունի զոհ դառնալ»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է քույրը՝ Անի Մարկոսյանը:

Արսենը ծնվել է Մարտակերտ քաղաքում զինվորականի ընտանիքում: Այնուհետեւ տեղափոխվել է հայրենի Առաջաձոր գյուղ: Առաջաձորում ավարտել է դպրոցը եւ մեկնել պարտադիր ժամկետային ծառայության, ապա անցել է պայմանագրային ծառայության՝ որպես ականանետի հաշվարկի հրամանատար: ««Եղնիկներ» կոչվող տեղամասում իրականացնում էին սահմանային հերթապահություն: Արսենը մինչեւ սեպտեմբերի 24-ը ծառայակից ընկերների հետ եղել է շրջափակման մեջ, սակայն այդ մասին մենք իմացել ենք միայն 24-ին, երբ հնարավոր եղավ նրանց շրջափակումից հանել: Ոչ մեկին հնարավոր չէր զանգել, եւ ոչ մեկից տեղեկություն չունեինք, որովհետեւ պատերազմի սկսվելուն պես երկրում ընդհատված էր հոսանքը եւ հեռախոսակապը»,- պատմում է քույրը:

Պատերազմն ավարտվել էր, իսկ թշնամին Ստեփանակերտի մատույցներում էր: Հանձնարարություն կար լքելու Արցախը: Շատերի պես նրանք եւս ընտանիքին տեղափոխելու պատասխանատվությունը վերցնում են իրենց ուսերին եւ սկսում վառելիք փնտրել:

«Երեք եղբայրներս սեպտեմբերի 25-ի վաղ առավոտյան դուրս են եկել տնից վառելիք փնտրելու, եղել են տարբեր լցակայաններում, բայց, ի վերջո, գնացել են Հայկազովում գտնվող ՊԲ պահեստ: Այստեղ երկար հերթ կանգնելուց հետո տեղի է ունենում պայթյունը, եւ նրանք տարբեր կարգի այրվածքներով տեղափոխվում են Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոց: Սեպտեմբերի 26-ի վաղ առավոտյան գրանցվել է Արսենի մահը՝ 90% ախտահանությամբ: Մյուս եղբորս ծանր այրվածքներով տեղափոխում են Երեւան, սակայն նրա կյանքը փրկել նույնպես հնարավոր չեղավ: Բժիշկներին հրաշքով հաջողվել է փրկել միայն փոքր եղբորս կյանքը»,- ասում է մեր զրուցակիցը:

Արսեն Մասիսի Մարկոսյանը մեկն է այն հարյուրավոր տղաներից, որոնք անձնվիրաբար կռվեցին, պայքարեցին հանուն հայրենիի, մազապուրծ փրկվեցին թշնամու գնդակից, սակայն, ցավոք, զոհ դարձան դեռեւս չպարզված հանգամանքներում սեպտեմբերի 25-ին Հայկազովի զորամասի պահեստում տեղի ունեցած պայթյունին:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՀԱՄԱԼՐՈՒՄ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 36-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» նախագիծը, որի նպատակը Հայաստանի Հանրապետության անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների առկա ցանկի փոփոխությունն ու լրացումն է:

Գործընթացի անհրաժեշտությունը պայմանավորված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թվականի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի եւ Հայաստանի Հանրապետության «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» օրենքի դրույթներով: Նախագծի ընդունումը կարեւորվում է Հայաստանի անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների գույքագրման եւ նշյալ կոնվենցիայի 12-րդ հոդվածի պահանջները բավարարելու անհրաժեշտությամբ: Սույն որոշման նախագծով Հայաստանի Հանրապետության անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների գույքագրման եւ նշյալ կոնվենցիայի 12-րդ հոդվածի պահանջները բավարարելու անհրաժեշտությամբ: Սույն որոշման նախագծով Հայաստանի Հանրապետության անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը, որը կազմված էր 19 տարրերից, համալրվում է եւս 14-ով:

Այդ 33 արժեքներն են՝ «Մոմերով պար», «Յոթը քար», «Քարկտիկ», «Գյումրիի ատաղձագործությունը», «Աճիկի պատրաստման ավանդույթը», «Կարճեւանի բարբառ», «Մեղրի համայնքի չաթանագործության ավանդույթը», «Գորիս եւ Սիսիան համայնքների բրուտության ավանդույթը», «Ամբողջահատիկ ալյուրից եւ թթխմորից հացի պատրաստման եւ կիրառման ավանդույթը», «Դափի, սանթուրի, սազի կատարողական եւ նվագարանագործական ավանդույթը», «Կաթնավով մատաղ» եւ «Բուկա բարանե ծես» արժեքները: Միեւնույն որոշմամբ՝ լրամշակվել են նախկինում գրանցված «Կարոս խաչ» վիպասք, «Լարախաղացություն», «Վիճակի երգեր», «Ժողովրդական ավետիսի երգեր», «Խաչբուռ» արժեքների մասին տեղեկությունները:

Հավելենք, որ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկերում ներառվում են հայ ժողովրդի մշակութային ինքնատիպությունն ու ազգային ինքնությունն առանձնահատուկ արտահայտող ավանդական մշակույթի տարրերը: Այդ արժեքների պահպանությունը, հանրահռչակումը մեծապես նպաստում են ազգային մշակութային ժառանգությունը սերունդներին փոխանցելու եւ միջազգային ասպարեզում Հայաստանի ճանաչելիության աստիճանը բարձրացնելու գործընթացին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԸ՝ 17-ՐԴ ՏՈՒՐՈՒՄ

Ֆուտբոլի Հայաստանի հավաքականի խաղացողներ, «Կրասնոդարի» պաշտպան Գեորգի Հարությունյանը եւ Մոսկվայի «Լոկոմոտիվի» կիսապաշտպան Նաիր Տիկնիզյանն ընդգրկվել են Ռուսաստանի առաջնության 17-րդ տուրի խորհրդանշական հավաքականում՝ ռուսական Championat.com-ի վարկածով:

Դարպասապահ՝ Արթուր Նիգմատուլին («Պարի Նիժնի Նովգորոդ»):

Պաշտպաններ՝ Կիրիլ Գոցուկ («Պարի Նիժնի Նովգորոդ»), Վիլիան Ռոշա (ԲԿՄԱ), Գեորգի Հարությունյան («Կրասնոդար»):

Կիսապաշտպաններ՝ Նաիր Տիկնիզյան («Լոկոմոտիվ»), Անտոն Զինկովսկի («Սպարտակ»), Վիկտոր Մենդես (ԲԿՄԱ), Իլզատ Ախմետով («Կրասնոդար»), Բեռնարդ Բերիշա («Ախմատ»):

Հարձակվողներ՝ Ֆյոդոր Չալով (ԲԿՄԱ), Մաքսիմ Գլուշենկով («Լոկոմոտիվ»):

Գլխավոր մարզիչ՝ Միխայիլ Գալակտիոնով («Լոկոմոտիվ»):

ՕԲԼԱԿԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Մադրիդի «Աթլետիկոյի» դարպասապահ Յան Օբլակը մեկնաբանել է «Բարսելոնայից» կրած 0:1 հաշվով պարտությունը Իսպանիայի առաջնության 15-րդ տուրի խաղում: Միակ գոլը խփել էր այս ամռանը «Աթլետիկոյից» վարձակալությամբ «Բարսելոնա» տեղափոխված պորտուգալացի հարձակվող Ժոաու Ֆելիշը:

«Շատ ցավալի է անմիջական մրցակցից պարտություն կրելը: Այնքան էլ լավ չսկսեցինք հանդիպումը, անիմաստ վատնեցինք ժամանակն առաջին խաղակեսում:

Եթե ամբողջ հանդիպման ընթացքում խաղայինք այնպես, ինչպես վերջնամասում, ապա գոլ խփելու ավելի շատ հնարավորություններ կունենայինք:

Վատ սկսեցինք հանդիպումը եւ պատժվեցինք: Բացատրություն չունեմ, թե ինչու այդպես ստացվեց: Ոչինչ չէինք կարողանում անել, չէինք ցանկանում պայքարել գնդակի համար, խայտառակություն է»,- Օբլակի խոսքը մեջբերում է Marca-ն:

«Աթլետիկոն» «Բարսելոնայի» խաղադաշտում չի հաղթել 2006 թվականից:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՀԵՏ

Իտալիայի գավաթակիր եւ սուպերգավաթակիր Միլանի «Ինտերի» մարզական տնօրեն Պիերո Աուզիլիոն հայտնել է, որ ակումբն ակտիվ աշխատանք է կատարում Հայաստանի հավաքականի նախկին ավագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանի հետ համագործակցությունը երկարաձգելու ուղղությամբ:

«Մենք ցանկանում ենք շարունակել մեր համագործակցությունը Մխիթարյանի հետ: Մենք հիմա արագացնում ենք Հենրիխի հետ բանակցությունները»,- Աուզիլիոյի խոսքը մեջբերում է twitter.com/NicoSchira-ն:

34-ամյա ֆուտբոլիստի պայմանագիրն «Ինտերի» հետ նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը:

● *Դեկտեմբերի 7-ին Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում տեղի կունենա «Հաղթանակի գենեզիս» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ՎԱՐՈՒՅԹ

ՀԱՐՑ. Կատարողական վարույթ հարուցվելուց հետո ինչքա՞ն ժամանակ ունեմ պարտավորությունը կամովին կատարելու համար:

Դավիթ Շաբոյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարկադիր կատարողը պարտավոր է սահմանված կարգով կատարողական վարույթ հարուցելուց հետո իրականացնել պարտապանի գույքի բռնագանձմանն ուղղված կատարողական գործողություններ, այդ թվում՝ արգելանք դնել պարտապանի գույքի վրա, այն առգրավել եւ իրացնել:

Պարտապանն իրավունք ունի կատարման ենթակա ակտի պահանջը կամովին կատարել մինչեւ այն հարկադիր կատարման ներկայացվելը, իսկ հարկադիր կատարման փուլում պարտավորության կամավոր կատարման ժամկետ օրենքը չի նախատեսում:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշված հանգամանքն արգելք չէ կատարողական վարույթի ցանկացած փուլում պարտապանի կողմից պարտավորությունը կամովին կատարելու համար:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

ՀԱՐՑ. Ո՞վ է զբաղվում պոլիէթիլենային տոպրակների արգելքի վերահսկմամբ:

Տիգրան Ավետիսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. 2022 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ առեւտրի իրականացման վայրերում եւ առեւտրի օբյեկտներում մինչեւ 50 միկրոն խտությամբ պոլիէթիլենային պարկերի եւ տոպրակների վաճառքի եւ իրացման արգելքի դրույթի նկատմամբ Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը չի իրականացնում վերահսկողական գործառույթներ:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմին

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն՝ արգելվող ապրանքներ վաճառելու (իրացնելու) նկատմամբ վերահսկողությունը վերապահված է տեղական ինքնակառավարման մարմիններին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանում ավարտվել է բռնցքամարտի ավագ տարիքի պատանիների աշխարհի առաջնությունը, որում Հայաստանի ներկայացուցիչները 10 մեդալ են նվաճել՝ 4 ոսկե, 5 արծաթե եւ 1 բրոնզե:

Հայաստանի պատանիների ընտրանին ԱԱ-ի թիմային պայքարում զբաղեցրել է 2-րդ տեղը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-1 +2 +3 +6
Կոտայքի լեռներ	0 +2 +4 +6
Կոտայքի նախալեռներ	+2 +4 +10 +12
Գեղարքունիք	0 +4 +7 +11
Լոռի	+4 +8 +8 +11
Տավուշ	+7 +12 +18 +20
Արագածոտնի լեռներ	-1 -5 +8 +11
Արագածոտնի նախալեռներ	-1 -5 +8 +11

Արարատ	-3 +1 +10 +12
Արմավիր	-1 -4 +10 +12
Վայոց ձորի լեռներ	-2 +1 +4 +7
Վայոց ձորի նախալեռներ	-2 +1 +12 +13
Սյունիքի հովիտներ	+8 +12 +20 +25
Սյունիքի նախալեռներ	+5 +9 +8 +11
ԼՂՀ	+2 +6 +9 +11
Երեւան	+2 +4 +12 +14

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Դավթաշենական 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*